

«հաւաճօրէն»ով մը, կարենալ բազմեցնելու համար 1686-1688ին:

Կը գրէ Ալթոյաճեան՝ Յովհաննէս վարդապետ թոխատցու մասին. —

«Տրդատ Եպս. Պալեան (Հայ Վանորայֆ, 134-5) կը յիշէ այս եկեղեցականը իբր վանահայր Յովակիմ-Աննա վանքին եւ Առաջնորդ Թոխատի, 1660էն սկսեալ: Սակայն 1666 Օգոստոս 31ին Գաղատիայէն եղիազար հակաքոռ կաթողիկոսին գրած իր մէկ նամակին մէջ (պատկերն է «Սիմոն», 1943, 283-284) կ'ըսէ թէ "լսեցաք թէ գրեք եւ գիր ի Թոխատ վասն առաջնորդութեան մերոյ", որով իր առաջնորդութեան սկիզբը 1666 տանիլ պէտք է կ'ըլլայ»:

Կը տեսնէ՞ք քմահաճութիւնը: Ալթոյաճեան կամայականօրէն «որով իր առաջնորդութեան սկիզբը 1666 տանիլ պէտք է կ'ըլլայ» իմաստը կը հաղցնէ «վասն առաջնորդութեան մերոյ» բառերուն, որոնք պարզապէս կը նշանակեն՝ մեր առաջնորդութեան համար: Եւ երբ իրենց խելով թեմը, չիտակ մեկնենք նաեւ նամակին հետեւեալ տողերը՝ «հրամանացդ խօսքն վերայ իմ գլխոյս, այժմուս իմ խնդիրքս հրամանացդ այդ չէ, այլ այս է՝ որ ձեռացդ նշանն առնէի եւ երթայի ի Կիպրոսու անապատն, բայց երբ հրամայեք եւ, խօսքդ չեմ ստեր, կ'երթամ ՔԱՆԻ ՄԸ ՕՐ ԿՈՒ ՆՍՏԻՄ (այս եւ հետագայ կրկնընդգծումները մերն են) քո սիրուն, թէ՛ նոցա ԻՆԱՏՈՒՆ, մինչեւ քո գրազմանց բարով խալսիս եւ ապա այլվի քո կամօք, զոր կամիս՝ ԶԱՅՆ ՆՍՏԵՅՈՒՅԱՆԵՍ», այն առնելով կ'ըսենք, որ 1660էն սկսեալ թոխատի առաջնորդ էր Յովհաննէս վրդ. ը, որ 1666ին Օգոստոսէն առաջ հեռացած էր անկէ, զացած Գաղատիա, իսկ թոխատցիք ԻՆԱՏ կ'ընէին առոր վերադարձին համար: Թէ ինչո՞ւ հեռացեր էր Յովհաննէս վրդ. ը թոխատէն. այդ ալ կը պարզուի իր նամակի հետեւեալ տողերէն — «Եւ դարձեալ գրեք եւ՝ թէ զինքն թոգատի առաջնորդ եմ դրեր եւ ինքը գացեր Յակոբ կաթողիկոսի (Էջմիածնայ օրինաւոր Հայրապետ) դօլ ու

դանատ է եղեր ու նուիրակ»:

Այս տողերը կը պոսան արդէն, թէ Յովհաննէս վրդ. թոխատէն հեռացեր էր՝ վախճալով եղիազարէն, որ թոխատը իր թեմէն էր ըրած. եւ երբ եղիազար հակաթոռ կաթողիկոսը կը գրէ իրեն, որ վերադառնայ թոխատ, կը պատասխանէ, «կ'երթամ, ՔԱՆԻ ՄԸ ՕՐ ԿՈՒ ՆՍՏԻՄ, ... ՄԻՆՉԵՒ ԶՈՐ ԿԱՄԻՍ՝ ԶԱՅՆ ՆՍՏԵՅՈՒՅԱՆԵՍ»: Եւ եղիազար, որ, ինչպէս տեսնենք, զգուշ էր Յովհաննէս վրդ. էն. նոյն տարին իսկ (1666) թոխատի վրայ կաթողիկոս կը ձեռնադրէ իր վաստակի Մինաս Ամթեցի վարդապետը եւ կը դրուէ թոխատ, որպէս իր «դօլ ու դանատ»ը, ինչպէս 1674էն ետքն ալ յաճախ գրեալ է զայն թոխատ, որպէս իր «նուիրակ»ը:

Շարունակենք Ալթոյաճեանի «հաւաճօրէն»ներով շրջափոխութիւնները — «Վիրակոս Եպս. (1674-1685) հաւաճօրէն յաջորդած է Յովհաննէս վարդապետին»: Բայց ինչո՞ւ «հաւաճօրէն Յովհաննէս վարդապետին», երբ մենք ստուգօրէն գիտենք, թէ ան միայն «քանի մը օր նստելու» համար Գաղատիայէն թոխատ կը վերադառնար: Այդ «քանի մը օր»ը որքան ալ քաջաբն ու երկարես՝ Ուրթ տարի չի կրնար դառնալ, 1664-1674: Յետոյ, նոյնքան ստուգօրէն գիտենք, թէ Մինաս Ամթեցին, որ 1666ին կաթողիկոս ձեռնադրուած էր թոխատի վրայ, ԱՅՆՏԵՂ ԷՐ ՄԻՆՉԵՒ 1674 (Թ. Ա. Բ., էջ 486): Հ. Ն. Ակինեան թորոս Աղբար Բ. ի մեղի ծանօթ (շերեւ) այս յիշատակարանը ամբողջութեամբ օրինակելէ ետք, վկայութեան կը կանչէ ուրիշ արժանահատ բանասէր մը այս մասին. —

«Այս 1674 տարւոյն հետը առած էր Մինաս նաեւ Սարգիս Սահէրնին, որ 1672ին եւղոկիայի Ս. Աստուածածին վանքի մէջ աշակերտած էր իրեն, 1673ին արեղայ ձեռնադրուած» (Հ. Գ. Գալէմբեարեան, «Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու», Վիեննա, 1915, էջ 66-67):

Ահա յաւելեալ վկայութիւն մը եւս, թէ Մինաս Ամթեցին 1661-1674 առաջնորդ էր